ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Մարտունի, Շահումյան 2,

Հեռ. 060-74-34-01


N 91

20 փետրվարի 2019 թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն Սանոսյան.*

Ձեզ ենք ներկայացնում Մարտունի համայնքի ավագանու 14.02.2019թ. նիստի արձանագրությունը և որոշումները:

Առդիր՝ 10 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Հ.ՏՈՆՈՅԱՆ

Կատարող՝
Գ. Ոսկանյան

# *ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ -2*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14 ՓԵՏՐՎԱՐԻ 2019Թ. ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ*

*Նիստին մասնակցում էին համայնքի ավագանու 14 անդամներից 9-ը՝* ՎԱՐԴԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ,ԱՐՏԱԿ ԳԱԼՍՏՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ԴԱՎԹՅԱՆ, ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ, ՍԵՐԳՈ ԵՂՈՅԱՆ, ՍԵՎԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ,ԱՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ, ԱՐՄԵՆ ՄՈՍՈՅԱՆ, ՏԻԳՐԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

*Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ա.Ավետիսյանը*
*Քարտուղարությամբ՝Գ.Ոսկանյանի*

## *Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ*

ՀԱՐՑ-14. ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-15. ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ԹԱՂԱՄԱՍԻ 6-ՐԴ ՇԵՆՔԻ ԹՎՈՎ 24 ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՎԱՐՁԱԿԱԼՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-16. ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉՈՒՀԻ ՄԱՐԻ . ԻՎԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-17. ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ 1/2 ՀԱՍՑԵԻ 05-003-0450-0036 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 8,53 ՔՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՀԱՐՈՆ ԱԴԻԼԽԱՆՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-18. ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉՈՒՀԻ ՍԻՐՈՒՆ ՀԱՄԱԶԱՍՊԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՋՈՀՎԱԾ ՈՐԴՈՒ ՇԻՐՄԱՔԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-19. ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.12.2018Թ. «2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 125-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԶԵԿ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ*

ՀԱՐՑ-20. ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՂԲԱՎԱՅՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԱՂԲԱՎԱՅՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՄՍԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մարտունի համայնքի ավագանին որոշեց հաստատել նիստի օրակարգը՝

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝9, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ռ.ԴԱՎԹՅԱՆ Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

Վ.ԴԱՎԹՅԱՆ Ա.ՄՌՍԱՅԱՆ

Մ.ԵՂՈՅԱՆ Տ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա.ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## *ՈՐՈՇՈՒՄ N 14*

*«14»-ը փետրվարի 2019թ.* *Ք.Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով.*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Մարտունի համայնքի 2019թ. բյուջեի ֆոնդային մասի «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» նախահաշվի 5113 հոդվածից 4300000(չորս միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ տրամադրել «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ին Մարտունի համայնքում «Մեկ թաղամասում խմելու ջրագծի և կոյուղագծի կառուցում» ծրագրի իրականացման համար համաֆինանսավորման նպատակով:

2. Մարտունի համայնքի 2019թ. բյուջեի ֆոնդային մասի «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» նախահաշվի 5113 հոդվածից 470 000 ( չորս հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ տեղափոխել «Մարտունու մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի նախահաշվի 5112 հոդված՝ ջեռուցման համակարգի կառուցման լրացուցիչ ֆինանսավորման նպատակով:

3. Մարտունի համայնքի 2019թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ տեղափոխել «Մարտունու Սմբատ Միերյանի անվան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի նախահաշվի 4511 հոդված «Գեղարքունյաց ձմեռ 2019» մարզական միջոցառման մասնակիցներին պարգևատրելու նպատակով գավաթներ և պատվոգրեր գնելու համար:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝8, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ռ.ԴԱՎԹՅԱՆ

Վ.ԴԱՎԹՅԱՆ

Ս.ԵՂՈՅԱՆ

Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

Ա.ՄՈՍԱՅԱՆ

Տ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 15*

*«14»-ը փետրվարի 2019թ.* *Ք.Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ԹԱՂԱՄԱՍԻ 6-ՐԴ ՇԵՆՔԻ ԹՎՈՎ 24 ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՎԱՐՁԱԿԱԼՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի գրությունները.*

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*
*<u>ՈՐՈՇՈՒՄ Է</u>*

1.Համաձայնություն տալ Մարտունի քաղաքի Զորավար Անդրանիկ թաղամասի 6-րդ շենքի թվով 24 բնակարանները անհատույց սեփականության իրավունքով հատկացնել բնակարանների վարձակալներին:

2. Պարտավորեցնել վարձակալներին համայնքապետարանի բյուջեի համապատասխան հաշվի համարին վճարել նախկինում կուտակված վարձավճարների պարտքերն ամբողջությամբ:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝8, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ռ.ԴԱՎԹՅԱՆ
Վ.ԴԱՎԹՅԱՆ
Մ.ԵՂՈՅԱՆ

Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
Ա.ՄՈՍՍՅԱՆ
Տ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 16*

*«14 »-ը փետրվարի 2019թ.* *Ք.Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ՄԱՐԻԱ ԻՎԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Սիրուն Համազասպի Հայրապետյանի դիմումը*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Մարտունի քաղաքի բնակչուհի Մարինա Իվանի Գրիգորյանին տրամադրել 150000( մեկ հարյուր հիսուն հազար) դրամ օգնություն՝ վիրահատություն կատարելու նպատակով:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝8, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ռ.ԴԱՎԹՅԱՆ
Վ.ԴԱՎԹՅԱՆ
Ս.ԵՂՈՅԱՆ
Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
Ա.ՄՈՍԱՅԱՆ
Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 17*

*«14 »-ը փետրվարի 2019թ.* *Ք.Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ 1/2 ՀԱՍՑԵԻ 05-003-0450-0036 ԾԱԾԿԱԳՐՈՎ 8,53 ՔՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՀԱՐՈՆ ԱՂԻԼԽԱՆՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 -րդ կետի պահանջներով*

*<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ</u>*
*<u>ՈՐՈՇՈՒՄ Է</u>*

1. 05-003-0450-0036 ծածկագրով ք. Մարտունի Մյասնիկյան փողոց 2-րդ փակուղի 1/2 հասցեի 8,53 քմ բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարել հողամասին սահմանակից գույքի սեփականատեր Ահարոն Աղիլխանյանին:
2. Հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել՝ 500 դրամ 1քմ-ի համար, ընդամենը՝ 4265 (չորս հազար երկու հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ:
3. Պարտավորեցնել Ահարոն Աղիլխանյանին վերը նշված հողամասի հարևանությամբ գտնվող իր սեփականությունը հանդիսացող Մյասնիկյան փողոց 35 հասցեի 05-003-0450-0043 ծածկագրով հողամասի հարավային հատվածից համայնքին փոխանցելու 27,20 քմ մակերեսով հողամաս:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝8, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ռ.ԴԱՎԹՅԱՆ Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
Վ.ԴԱՎԹՅԱՆ Ա.ՄՈՍՍՅԱՆ
Ս.ԵՂՈՅԱՆ Տ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 18*

*«14»-ը փետրվարի 2019թ.* *ք.Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ՄԻՐՈՒՆ ՀԱՄԱԶԱՍՊԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԶՈՀՎԱԾ ՈՐԴՈՒ ՇԻՐՄԱՔԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Միրուն Համազասպի Հայրապետյանի դիմումը*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Մարտունի քաղաքի բնակչուհի Միրուն Համազասպի Հայրապետյանին տրամադրել 250000 ( երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ օգնություն՝ զոհված որդու շիրմաքարի կառուցման համար:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝8, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ռ.ԴԱՎԹՅԱՆ
Վ.ԴԱՎԹՅԱՆ
Ս.ԵՂՈՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
Ա.ՄՈՍԱՅԱՆ
Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 19*

*«14»-ը փետրվարի 2019թ.* *Ք.Մարտունի*

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.12.2018Թ. «2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 125-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով.*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է*

1.«2019թ-ի համար Մարտունի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 125 -Ն որոշման «Մարտունու մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի բաժնը լրացնել նոր 7-րդ կետով.

| *Հ/Հ* | Հաստիքների անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ | Աշխատավարձ | *20 տոկոս բարձր լեռնային* | *Ընդամենը* | Աշխատողների քանակը |
|---|---|---|---|---|---|---|---|
| *1* | *Համակարգչային օպերատոր* | *0,25* | *80000* | *20000* | *2000* | *22000* | *1* |

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝8, դեմ՝ 0, ձեռնպահ՝0

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ռ.ԴԱՎԹՅԱՆ
Վ.ԴԱՎԹՅԱՆ
Ս.ԵՂՈՅԱՆ

Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
Ա.ՄՈՍԱՅԱՆ
Տ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# *ՈՐՈՇՈՒՄ N 20*

*«14 »-ը փետրվարի 2019թ.* *Ք.Մարտունի*

ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՂԲԱՎԱՅՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԱՂԲԱՎԱՅՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՄՍԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.*

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Համաձայնություն տալ Վաղաշեն համայնքին ժամանակավորապես օգտվելու Մարտունի քաղաքի աղբավայրից:

2. Աղբավայրի ժամանակավոր օգտագործման պայմանագիրը կնքել մինչև 2019թ. ապրիլի 30-ը:

3. Աղբավայրից օգտվելու վարձավճարի չափը սահմանել 300000 (երեք հարյուր հազար) դրամ ամսական:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝2, դեմ՝ 3, ձեռնպահ՝3,
ՈՐՈՇՈՒՄԸ ՉԸՆԴՈՒՆՎԵՑ

Համայնքի ղեկավար՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ՝

ԿՈՂՄ՝ Ռ.ԴԱՎԹՅԱՆ
Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
ԴԵՄ՝ Ա.ՄՈՍԱՅԱՆ
Վ.ԴԱՎԹՅԱՆ
Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՁԵՌՆՊԱՀ՝ Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Մ.ԵՂՈՅԱՆ